# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
## « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «26» 11. 2019թ.
ժամը 11⁰⁰

Մասնակցում էին՝

**Գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան (ԳԱՊ),

գնահատողներ՝

- ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պետի ՊԺԿ, գնդապետ Ձ. Մելիքյան
- ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիքալվացարանային ապահովման բաժանմունքի ավագ ինժեներ, կապիտան Վ. Բարսեղյան

Բացակայում է՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎԲՆ, կոպտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ.Ուստյան:

Գնումները համակարգող՝ ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ Տ.Աբրահամյան

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Տ.Աբրահամյան)

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**1. Մասնակցի՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Տ.Աբրահամյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին մասնակիցների համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են հրավերի պայմաններին, բացառությամբ ներքոհիշյալների՝

- Գեգրոպ ՍՊԸ կողմից ներկայացված հավելված 3.1-ում տեխնիկական բնութագրում բացակայում է հրավերով պահանջվող ՝ Գոտկատեղը բացված վիճակում հավասարեցնելով կիսավարտիքի միջնամասի լայնության հետ, սկսած 48 չափսից, պետք է լինի ոչ պակաս 38 սմ, հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 2 սմ՝ նախադասությունը:
- Գեգրոպ ՍՊԸ կողմից ներկայացված հավելված 3.1-ում տեխնիկական բնութագրում նշված է ՝ Կողքերից գոտկատեղի վերին եզրից մինչև փողքի ներքին եզրը, սկսած 48 չափսից, պետք է լինի ոչ պակաս 29 սմ, հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 2 սմ ՝, այնինչ հրավերով պահանջվում է ՝ Կողքերից գոտկատեղի վերին եզրից մինչև փողքի ներքին եզրը, սկսած 48 չափսից, պետք է լինի ոչ պակաս 29 սմ, հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 1 սմ:
- Օբրոոն Տեքստիլ ՍՊԸ կողմից ներկայացված հավելված 3.1-ում տեխնիկական բնութագրում 8-րդ չափաբաժնի մասով նշված է /Արտադրվում է սև գույնի էթիլեն վինիլ ացետատից(EVA) կամ համարժեք հումքից/ , այնինչ անհրաժեշտ է հստակեցնել տեխնիկական բնութագիրը՝ բացառելով կամ համարժեք բառերը:
- Օբրոոն Տեքստիլ ՍՊԸ կողմից ներկայացված հավելված 3.1-ում տեխնիկական բնութագրում 8-րդ չափաբաժնի մասով նշված է:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվեց երեք աշխատանքային օրով և առաջարկվեց մասնակիցներին շտկելու անհամապատասխանությունները: Մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են անհամապատասխանությունները/ Համաձայն հայտը նախագծող անձ գնդապետ Ձ. Մելիքյանի մասնագիտական եզրակացության՝ Օբրոոն Տեքստիլ ՍՊԸ ներկայացրած տեխնիկական բնութագիրը 8-րդ չափաբաժնի համարվել է համարժեք հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրին/:

Քանի որ 13.11.2019թ. ստացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացությունը՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:

1.2. 03.12.2019թ Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Տ.Աբրահամյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11⁰⁰-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**Գնահատող** Հ.Մելիքյան

**Գնահատող** Ձ. Մելիքյան

**Գնահատող** Վ. Բարսեղյան

**Գնումները համակարգող՝** Տ.Աբրահամյան